


406

Մարտի 14
Մարտի 16-ի
հարիւր
1903

1

S - 80



2010

№ 2

Լ. Ն. ՏԵԼՍՏՈՅ

ՄԱՐԴԻԿ ԻՆՉՈՒ ԵՆ
ՀԱՐԲՈՒՄ.
(ԱՆՄՏԱՆՈՒՄ.)

Թարգմ.

Ե. Ծ. Վ. Մ.

1903

Թաւրիզ

Թեմական Արագատիպ Հայրոց Ատր. — Թաւրիզում,
Վաղամեռիկ Եղիսաբէթ Միրզաբէկեանի Յիշատակին,

№ 2

S-80

ար

№ 9273

Լ. Ն. ՏՇԼՍՏՈՅ

ՄԱՐԴԻՆ ԻՆՉՈՒ ԵՆ

ՀԱՐԲՈՒՄ.

(ԱՆՄՏԱՆՈՒՄ.)

1002
6190



1903

Թաւրից

Թեմական Արագատիպ Հայոց Ատր. — Թաւրիցում:
Վաղամտիկ Եղիսարէթ Միրզաբէկեանի Յիշատակին

ՅՈՒՆԱԶՈՒՆ

Հայ ժողովուրդը, ինչպէս կապանքներից՝ երկար լացից յետոյ ազատւած մի մանուկ, երկար դարերի ընթացքում անշարժ և խաւարի ու չետադիմութեան մէջ մնալուց յետոյ, իւր աշխատասիրութեամբ, խնայողութեամբ և երբեմն էլ միջոցների տնտեսականութեամբ՝ տասն և իննը ընդ դարու սկզբներից կարողացաւ աւելի անդորր և ապահով կեանք ունենալ Կովկասի քարտէզի և տիրապետողների փոփոխութեան շնորհիւ: Նա էլ կարիք զգաց մասնակից լինելու իրեն առաջ բացւող եւրոպական քաղաքակրթութեան պտուղներին և չկարողանալով որոշել քաղաքակրթութեան էականը ձեռնակներից և օգտակարը վնասակարից, լոյսը կրակից և կենսատու ջերմութիւնը ալրոդ բոցերից ու ծխից, ժառանգորդ հանդիսացաւ աւելի արատների, արտաքինի ու կեղծի, քան էականի և ներքինի, որովհետեւ վերջինս աւելի դժուարին և տեղական աշխատանք էր պահանջում, քան առաջինը, որի համար նա ունէր աչք ու անորժակ, հարաւցու տաք արիւն ու կիրք և նիւթական կարողութիւն՝ դարերի ժառանգութեան՝ ճարպիկութեան հետ միացած: Մինչդեռ նոր քաղաքակրթութիւնը ոչ թէ պէտք է տար, նեցուկ պէտք է դառնար նրան ոտքի կանգնելու, նա՝

107922-42

շատ քիչ բացառութեամբ զրկեց իւր լաւ յատկութիւններինցն էլ և ունեցած պակասութեանց վրայ աւելացրեց նաև արևմուտքի արատները: Նրա համար քաղաքակրթութիւնը ստացաւ արտաքին կերպարանք. - շորեր, զարդեր, խմիչքներ, զւարճութիւններ, մակերևութական ուսումն կամ ուսման փշրանքներ, ահա նրա ամբողջ ձեռք բերածը՝ ինչպէս ասացի՝ շատ քիչ բացառութեամբ: Այսպիսի փոփոխութեան ենթարկւեցինք մենք՝ հայութեան բոլոր դասակարգերին պատկանող անձինքս՝ — հոգևորական և աշխարհական, վաճառական և արհեստաւոր, ծառայողներ և գիւղացիք, կանայք և մարդիկ առհասարակ և ալժամ եթէ մենք գումարելու լինինք ստացած լաւն ու վատը և կշռենք, հազիւ թէ առաջինը կէս⁰⁰ կազմի մեր արատների: Բայց ժամանակ է սթափւելու, ժամանակ է գեղեցիկ և կազմակերպւած գործունէութիւն սկսելու այդ արատների դէմ: Եթէ մեզ յաջողւեց ազատել հայ ժողովրդի մի ամենափոքրիկ մասը նրանցից գէթ մի քանիսից, եթէ մենք գէթ չնչին կերպով ներշնչել կարողացանք նրան մոլորւած լինելու համոզմունքը, եթէ կարողացանք առաջ բերել նրա գիտակցութեան մէջ փոքրիկ աշխատանք՝ մաքառելու խղճի և կենցաղավարութեան անհամբերաշխուժեան դէմ և այդ երկուսի մէջ մի գեղեցիկ ներ-

դաշնակութիւն ստեղծելու, դա կլինի մի գործ շատ մաքուր և արգասաւոր. մի գեղեցիկ սերմ, որի առատ հունձը շուտ կը հասնի և կը քաղցրացնի սերունդների ճաշակը: Այս ուղղութեամբ մեր մէջն էլ սկսւած է հոգածութիւն և գործունէութիւն. Հիւսիսից բժիշկ Բուդուղեանի գեղեցիկ և մատչելի գրքերը, հարաւից՝ կրկին բժիշկ Վահան Արծրունու բրօշիւները մեզ այդ են ասում և այդ ճանապարհով առաջնորդել են կամենում: Ես ևս նիրհող Պարսկաստանի նոր արթնացող հայ ժողովրդի մի մասի անարժան հովիւս՝ բացի եկեղեցու բեմից համարեա իւրաքանչիւր շաբաթ արտասանած թույլ քարոզներինցս՝ ուզեցի գրքով և գրչով էլ օգտակար լինելու ձգտել ժողովրդիս՝ կենդանի եկեղեցու համար և ձեռնարկեցի նախ աշխարհահօշակ և. Տալստօյի հեղինակութեանց թարգմանութեան, որից յետոյ գուցէ յաջողւի տալ նաև այլ նիւթեր՝ յատկապէս մեր կեանքից վերցրած:

Այս անգամ տալիս ենք Տալստօյի ,,Մարդիկ ինչու են հարբում (անմտանում)“ գրքիկի թարգմանութիւնը՝ որպէս մի անուրանալի ճշմարտութիւն, որի կենդանի ապացոյցը կարող են լինել շատերը և իմ անձնական փորձս. - մարդիկ, որ մի ժամանակ խմել և ծխել են, իսկ հետզհետէ համոզւելով, որ այդ աստիճանական և բարո-

լական անձնասպանութիւն է, կարողացել են ազատել և ծխելուց և խմելուց:

Ես ինձ նւիրել էի Աւետարանի աշակերտութեան և ծխում էի և խմում, թէև չափաւոր: Այդ սկսել էի Տալտոյի նկատած պատանեկական շրջանից և շարունակում էի բաւական երկար՝ — ամբողջ տասն և ութ տարի: Չընայած զգալուն սրտիս, անպայման մաքուր լինելու բուռն ծարաւիս և շատ գործ կատարելու տենչանքիս, տեղի էր ունենում հակառակը. — ես նկատում էի, որ արդիւնքը եթէ բացասական չէր, գոնէ մօտենում էր նրան: Ես չիշում եմ այն բոլոր մօմէնտներն, երբ առանձին ծարաւ էի զգում ծխելու, մի բաժակ օղի կամ գինի խմելու և պէտք է ասեմ, որ շատ էլ նախանձելի չէին այդ րոպէները: Ես ծխում էի և շատ անգամ առաջս կանգնած մուրացկանին օգնելու հնարաւորութիւնից զուրկ էի: Ես գործ էի ածում գինի, իսկ մարդկանց ուզած ժամանակին ջուր չէի կարողանում հասցնել: Ես մտածում էի անձիս, չուքիս ու փառասիրութեանս մասին, բողբոջում էր խիղճս և ես ծխում էի ու ժամերով դահլիճի մի ծայրից միւս ծայրը չափում: Ս, եթէ անհամեստութիւն չը համարւի մի առ մի պատմել թմրածութեանց իւրաքանչիւր օրուայ հետքերը. . . բայց այդ իւր ժամանակին, իսկ առ այժմս կարողացել եմ ազատել

այդ քաղաքակրթական խաբուսիկ և սխալ նշաններից և համարձակ կասեմ, որ երկար ժամանակ իսկապէս խաբել եմ ինձ, մխիթարւել նրանով, որ չեմ հարբել, չեմ վայր ընկել, շէր չեմ դատարկել, ափիօն չեմ ծխել և այլն և այլն. բայց, որ ամենափոքր քանակութեամբ գործածած հարբեցուցիչ նիւթերը նոյն ներգործութիւնն ունէին, ինչ որ ունենում են մեծ քանակութեամբ գործածւած ժամանակ, դա ինձ համար անվիճելի է, ինչպէս և անվիճելի կըլինի իւրաքանչիւր փորձել կամեցողի և բազմաթիւ նման օրինակներին հետևողի համար: Այսպէս սիրելի բնութեցող, սթափւիր, եթէ ծխում կամ խմում ես, թող այդ թրմբեցնող և խիղճդ բթացնող ու խաւարեցնող սովորութիւնը, զսպիր քեզ մի երկու ամիս և դիտելով նոյն բնթացքի մէջ մնացողներին, կըհասկանաս, թէ՞ ինչպէս և ինչ չափով ես մոլորւած եղել քաղաքակրթութեան վնասակար արտաքինը միայն իւրացնողներից: ~~Դիտիր~~ միջավայրդ, դրացիներիդ, ընկերներիդ, մտիր հիւանդանոցներն ու աղքատանոցները, մտիր գժանոցներն ու բանտերը և ժողովիր ամենամանրամասն ստատիստիքական (վիճակագրական) տեղեկութիւններ և կըհամոզւիս, որ տեսածդ երևոյթների 9|10 մասը լառաջ է եկած հարբեցուցիչ նիւթերի գործածութիւնից: Որեւէ բանով հարբում է անպայման վաշխառուն,

մատնիչը, ստախօսը, անբարեխիղճ արհեստավորն ու վաճառականը, գիւղական բռուկները, անաշխատ՝ իւր կեանքի ընթացքի և խղճի պահանջների մէջ անհամերաշխութիւն ունեցող հոգեւորականը. հարբում է կեղեքողը, կաշառակերը. հարբում՝ անմտանում է կամ գինիով, կամ գարեջրով կամ ծխախոտով և այլն և այլն: Լաւ ուշադրութիւն դարձրու, եթէ գիւղացի ես, գիւղականների վերայ. մէկին ընտրում են տանուտէր, գրագիր կամ միրաբ. այդ պաշտօններում հաստատելուց յետոյ նա մի տեսակ կտրւում է հողից, մաքուր շինական աշխատանքից. ստրկահոգի և լանցաւոր գիւղացիք բռնւում են այս կամ այն գործում. ազատելու համար նախ սկսում են գիւղական իրաւատէրերից՝ նոցա շաքար, թէյ, պտուղներ և կամ անասուններ իբրեւ պարգև, բայց իսկապէս որպէս կաշառք բերել: Անփորձ տանուտէրը սկզբում կարմրում՝ բարկանում է, վախում է խղճի ձախից, վախում է մօտեցող այդ նւէրներին, բայց բերողները պատում են, հացի են հրաւիրում, հարբեցնում են և դարձում կաշառակեր: Մի անգամ շեղելուց յետոյ, արդէն սկսում է անկումն՝ հետզհետէ աւելի մեծ չափով և մենք տեսնում ենք, որ գիւղական ընտրեալները, որոնք կաշառք առնելու առիթ ու սովորութիւն ունին, ամենից շատ են հարբում, հարբողներն էլ ամե-

նից շատ լանցանք գործում: Դիտիր բոլոր դասակարգերը, բարձրացիր աշխարհի ստեղծած դասակարգային և պաշտօնավարական աստիճաններով, զննիր այդ աստիճաններին կանգնածներին և տես թէ ովքեր են աւելի հարբում և աւելի լանցանք գործում: Իւրաքանչիւր քաղաքիսում կը հանգիպես Տալսուցի նկատած երեւոյթի՝ ովքեր որ զգում են իրենց կեանքի ու պաշտօնի և խղճի պահանջների մէջ եղած անհամերաշխութիւնը. և որքան մեծ է այդ զգացմունքը, այնքան էլ մեծ չափեր է ընդունում արտաքին միջոցներով մոռանալու և հարբելու ծարաւը, եթէ խղճի ձայնը չի լսողթանակում և ընդհատել տալիս մի անգամ ընդունւած ընթացքը:

Երբ հանգիպելու լինիս հիւանդոտ, ապուշ, մաշւած և ցնցոտիների մէջ փաթաթւած երեխաների կամ մեծերի, ուսումնասիրիր պատճառները և կը գաս այն եզրակացութեան, որ այդ երեւոյթների ամենամեծ տոկոսը առաջ է գալիս հարբեցուցիչ նիւթերի գործածութիւնից: Այո մասին կարելի է գրել հատորներ, կարելի է նիւթ դարձնել զեղարւեստի՝ նկարչութեան, քանդակագործութեան, երաժշտութեան և գրականութեան: Յուց տալ, թէ ի՞նչու բանական և խելացի մարդ արարածն՝ անասնանում և ընկնում է հարբեցուցիչ նիւթերի գործածութիւնից. ինչպէս է նա աստիճանաբար

խորատկում իւր բոլոր սրբութիւններն ու սկզբունքները՝ արդարութիւնն ու օրէնքը, որպիսի բարձրութիւնից—ինչպիսի անդունդն է ընկնում և այդպիսով թշուառանում և թշուառացնում իւր նմաններին և պէտք է հաւատալ, որ նա կ'աշխատի ազատ պահել իրան այդ արատներէից, կ'աշխատի քարոզել նոյնը իւր շրջանում, ընկերներին, ծանօթներին, գիւղում ու քաղաքում, լսարանում ու եկեղեցու բեմից, մի խօսքով ամեն տեղ և ամեն միջոցներով և կըզալ մի օր, երբ կունենանք սթափւած՝ ժուժկալ և պաշտօնամիտ հասարակութիւն, որի կեանքն ու գործը բոլորովին ալ պատկեր և կերպարանք կունենայ, քան մեր ներկալ կենցաղավարութիւնը:

Մի զարմանալի երևոյթի վերայ կուղէի դարձնել ընթերցողի ուշադրութիւնը. — թէ որպիսի կապ ունին իրար հետ առհասարակ հարբեցուցիչ նիւթերը և ինչպէս նրանցից մէկն ու մէկի գործածութիւնն անպայման առաջնորդում է գէպի միւս հարբեցողութիւնները:

Ամենքը տեսել և բազմաթիւ դէպքերից գիտեն, որ հարբեցողներն համարեա առանց բացառութեան ծխում են, իսկ ծխողները կարողանում են բաւականանալ ծխախոտով և հարբեցութեան անձնատուր չեն լինում, որովհետեւ ծխախոտով հարբելը շատ աւելի դիւրին է, մատչելի և հա-

ճելի ծխողների համար, քան օղիով, գինիով կամ ալլ խմիչքներով հարբելը. ահա այս պատճառով ծխողներն աւելացնում են ծխածի քանակութիւնը՝ օրական քառորդ ֆունտ ծխախոտ կամ հարիւրներով պապիրոս են ծխում. ծխում անկողնում, կէս գիշերին, լատկապէս ծխելու համար արթնանում են, ծխում, թմրում և նորից քնում:

Ահա թէ ինչ պատահեց ինձ հետ.

Առաջ ես թողի ծխելը, բայց ճաշի ժամանակ մէկ կամ երկու բաժակ գինի գործածելու սովորութիւնս շարունակւում էր: Ծաշից չեռու երբեմն ցանկութիւն էի զգում ծխելու՝ մանաւանդ այն ժամանակ, երբ կէս բաժակ գինի աւելի էի գործածել. ուրիշ խօսքով ծխախոտը դեռ երբեմն իւր հոտով հաճելի էր թւում ինձ: Իսկ եթէ պատահում էր ընթրել և ընթրիքի ժամանակ մէկ կամ երկու բաժակ գինի խմել, քնած ժամանակս, երազում անպատճառ ծխում էի և կարծելով, որ իրօք ծխել եմ, երբեմն խզճի խայթից ու զայրութից արթնանում և որոշ թեթեւութիւն էի զգում, որ իսկապէս չեմ ծխել:

Այդպիսով անցաւ եօթ ամիս և շնորհիւ ծխախոտից հրաժարւելուս, գինին էլ կորցրեց իւր կարեւորութիւնն ինձ համար: Մանաւանդ զայրանում էի, երբ գինու շնորհիւ կրկնւում էին սրտայրուսով երազներս:

Վճռեցի վերջնականապէս թողնել առհասարակ խմիչքի գործածութիւնը և սեղանի վերայ ունենալ կամ «արդու» մածնաջուր և կամ «ռուփ» (շարբաթ որ և է մուրաբայի սիրօպով,) ինչպէս այդ սովորութիւն է Պարսկաստանում և այդ օրւանից միայն ես զգացի թէ ինչ աստիճանի զարչելի բան է ծխախոտի հոտը, ծխողի արտաշնչութիւնը, հարբած մարդը՝ օդու կամ գինու հոտով: Դեռ ծխելս թողնելուց մի ամիս չետոյ՝ զարմանալի փոփոխութիւն նկատեցի իմ մէջ տոկունութեան և աշխատասիրութեան վերաբերութեամբ. իսկ գինու գործածութիւնը թողնելուց չետոյ այդ փոփոխութիւնն աւելի զգալի և մխիթարական եղաւ ինձ համար: Բայց ես այդ չեմ նկարագրել, որովհետեւ ըստ իս անհամեստութիւն է, այլ կ'առաջարկեմ, որ իւրաքանչիւր ծխողն ու խմիչքներ գործածողը փորձի այդ անձամբ և կրտսնի իրեն հաստատակամութեան փալլուն և հրաշալի հետեւանքները: Իսկ այդ տեսակ տրամադրութիւն և կամք առաջ բերելու համար, ես տալիս եմ ժամանակակից մեծ բարոյախօս և աներկիւղ ճշմարտախօս Լ. Ն. Տալստօյի «Ի՞նչու են մարդիկ հարբում» աշխատութիւնը և ուզում եմ հաւատալ, որ սիրով կ'ընդունւի այն և շատերը կ'աշխատեն փախչել ժամանակակից մեծ մոլութիւններից՝ ծխելուց և հարբելուց, քաջ հասկանալով հարբեցնող նիւթե-

րի գործածութեան գլխաւոր պատճառն և նրանց հետեւանքի կործանիչ ազդեցութիւնը մարդու ֆիզիքական, մտաւոր, բարոյական կեանքի, և նրա տնտեսական բարեկեցութեան վրայ:

Ե. Ծ. Վ. Մուրադեան



ԻՆՉՈՒՒՆ ԵՆ ՄԱՐԴԻԿ ՀԱՐՔՈՒՄ

(ԱՆՍՏԱՆՈՒՄ)

Ինչ է անմտացնող՝ հարբեցնող նիւթերի՝ — օ-
ղու, գինու, գարեջրի, ափիօնի, լաշիշի, ծխախոտի
և միւս աւելի պակաս տարածւածները՝ — եթերի,
մորֆինի, ճանճասպանի գործածութիւնը: Ինչու
 է նա սկսել և արագութեամբ տարածւել ու տա-
 րածւում է ամեն տեսակ մարդկանց՝ թէ քաղա-
 քակրթւած և թէ վայրենիների մէջ միատեսակ:
 Այս ինչ կը նշանակէ, որ ուր չը կայ օղու, գինու
 և գարեջրի գործածութիւնը, այնտեղ գործ է
 ածւում ափիօն, լաշիշ, ճանճասպան և այլն. իսկ
 ծխախոտն ամեն տեղ:

Մարդկանց ինչու է հարկաւորւում անմտանա-
 ւը՝ հարբել:

Հարցրէք առաջին հանգիստողից, թէ նա ինչու
 է սկսել գինի խմելը և ինչու է խմում այժմս, և
 նա կը պատասխանի ձեզ, «այնպէս, դուր է գա-
 լիս, ամենքն էլ խմում են», և կ'աւելացնի.
 ,,այնպէս, ուրախութեան՝ քէֆի համար: Մի
 քանիսն էլ, որոնք իրենց երբէք նեղութիւն չեն
 տւել մտածելու, լաւ է արգեօք թէ վատ, որ ի-
 րենք գինի են խմում. կ'ասեն և այն, որ գինին
առողջութեան համար լաւ է, ոյժ է տալիս, այ-

սինքն կասեն այն, ինչի ստույթիւնը որ վաղուց ի վեր ապացուցւած է:

Հարցրէք ծխողից, թէ ինչու է սկսել ծխախոտ ծխելը և ծխում է այժմս և նա նոյն ձևով կը պատասխանի. „այնպէս, տխրութիւնից, բոլորն էլ ծխում են“:

Հաւանականօրէն նոյն պատասխանը կը տան տփօն, յաշիշ, մորֆին և ճանճասպան գործածողները:

„Այնպէս, տխրութիւնից, քէֆի համար, բոլորն էլ նոյնն են անում“: Բայց չէ, որ այդ տխրութիւնից և քէֆի համար լաւ է միայն այն պատճառով, որ բոլորն են անում — պտտցնել մատներով, շլացնել, երգել, նւագել գուգուկի վերայ և այլն և այլն, անել այնպիսի մի բան, որի համար պէտք չէ ոչ բնական հարստութիւնների վատնումն և ոչ մեծ բանւորական ուժ. անել այն՝ ինչ որ չէ վնասում ոչ մեզ, ոչ էլ ուրիշներին. բայց չէ որ ծխախոտի, գինու, յաշիշի և ափիօնի արտադրութեան համար շատ լաճախ հողագործի ազգաբնակչութեան միլիօնաւոր ամենալաւ հողաբաժինները բռնւած են լինում հաճարի, կարտօֆիլի (գետնախնձորի), կանեփի, կակաչի, ծխախոտի տնկարաններով և վազերի ալգիներով, և միլիօնաւոր բանւորներ՝ Անգլիայում ամբողջ ազգաբնակչութեան մի ութե-

րորդ մասը իրենց ամբողջ կեանքի ընթացքում զբաղւած են անմտացնող նիւթերի արտադրութեամբ: Բացի դրանից՝ այդ նիւթերի գործածութիւնը պարզապէս վնասակար է. նա առաջ է բերում ամենքին յայտնի և ամենքից վաղուց խոստովանած սոսկալի դժբախտութիւններ, որից աւելի շատ մարդիկ են կոտորւում, քան բոլոր պատերազմներից և վաբակիչ հիւանդութիւններից միասին: Եւ մարդիկ գիտեն այս, այնպէս որ չէ կարող պատահել, որ այս բոլորը տեղի ունենայ տխրութիւնից, քէֆի համար, որովհետեւ ամենքն էլ նոյնն են անում: Այտեղ մի ուրիշ բան պէտք է փնտռել: Անընդհատ և ամեն տեղ հանդիպում էք մարդկանց, որոնք սիրում են իրենց զաւակներին, պատրաստ են ամեն տեսակ զոհաբերութիւն անել նրանց երջանկութեան համար, բայց և այնպէս վատնում օդու, գարեջրի, կամ առլիս են ափիօնի, յաշիշի ու ծխախոտի այն, ինչը որ կարող էր կամ ամբողջովին կերակրել խեղճութեան մէջ մնացած՝ սոված երեխաներին, կամ ազատել նրանց բազմութիւ գրկանքներից: Ակներե և, որ եթէ իւր ընտանիքի գրկանքների և տանջանքների ու անմբտացնող նիւթերից իրեն զսպելու մէջ ընտրութիւն անելու հարկադրւած մարդը՝ ընտրում է առաջինը, ուրեմն նրան այդ բանն անելու հարկադրում

է մի ինչ որ աւելի նշանաւոր բան, քան աչն հանգամանքը, որ ամենքն էլ ալդ են առնում, որ դա հաճելի է: Ակներև է, որ այս կատարում է ոչ թէ տիրութիւնից, ուրախութեան և քէֆի համար, այլ և նրա համար, որ ալստեղ կալ աւելի մեծ պատճառ:

Որքան ես կարողացալ հասկանալ այս առթիւ եղած նիւթերի ընթերցանութիւնից, ինձ և գըլխաւորապէս այլ մարդկանց գիտելուց, երբ ես խմում էի գինի և ծխախոտ ծխում, ալդ պատճառը հետեւեալն է. — գիտակցական կեանքի շրջանում մարդս չաճախ կարող է նկատել իւր մէջ երկու բաժան էութիւն՝ մինը — կոյր՝ գգալական, իսկ միւսը տեսող՝ հոգեւոր: Կոյր կենդանական էութիւնը ուտում, խմում, հանգստանում, քնում, բազմանում և շարժւում է ինչպէս մի լարւած մեքենայ, տեսող՝ հոգեւոր էութիւնը կապւած կենդանականի հետ, ոչինչ չի անում, այլ միայն գնահատում է կենդանական էութեան գործունէութիւնը նրանով, որ չի միանում, երբ չի հաւանում կատարած գործը և համբարաշխ է գտնում, երբ ընդունում քաջախերում է այն:

Տեսող գոյութիւնը կարելի է համեմատել կողմնացոյցի սլաքի հետ, որը մի ծայրով ուղղւած է գէպի հիւսիս, իսկ միւսով հարաւ և որը իւր ամբողջ երկարութեամբ ծածկւած է մի փոքրիկ քա-

նոնով և աներևոյթ է, քանի որ սլաքակիր մարմինը շարժւում է սլաքի ուղղութեամբ, բայց տեսանելի է գտնում՝ հէնց որ սլաքակիր մարմինը շեղւում է նրա ցոյց տւած ուղղութիւնից:

Ճիշտ նոյն ձևով էլ տեսող՝ հոգեւոր էութիւնը, որի արտայայտութիւնը ուսման խիղճ ենք կոչում, մի ծայրով միշտ ցոյց է տալիս բարին, իսկ միւսով չարը, և մեզ համար անտեսանելի է, քանի որ չենք շեղւել նրա՝ չարից դէպի բարին ցոյց տւած ուղղութիւնից: Բայց բաւական է, որ մենք խղճի հակասակ մի վարմունք թույլ տանք մեզ և երևան է գալիս հոգեւոր էութեան գիտակցութիւնը, որը ցոյց է տալիս, որ մեր կենդանական էութեան գործունէութիւնը շեղւել է խղճի ցոյց տւած ուղղութիւնից: Ինչպէս որ ծովագնացը չէր կարող շարունակել իւր գործունէութիւնը լողաթիւերով, մեքենայով կամ առագաստներով, երբ գիտէ, որ ինքը այն կողմ չի գնում, որ կողմը որ գնալու էր, մինչև որ իւր շարժումները չը համապատասխանեն կողմնացոյցի ուղղութեան, կամ չը ծածկի իրենից վերջինիս շեղումը, ճիշտ նոյնպէս էլ և ամենայն մարդ՝ նկատելով իւր խղճի և կենդանական գոյութեան անհամբարաշխութիւնը, չի կարող շարունակել ալդ գործունէութիւնը՝ մինչև որ կամ խղճի հետ չը համաձայնեցնի իւր գործերը և կամ չը ծածկի իրենից խղճի ցուցում-

1002
619

ներն իւր կենդանական կեանքի անկանոնութեան մասին:

Սարգսու ամբողջ կեանքը բաղկացած է երկու տեսակ գործունէութիւնից. առաջինը՝ երբ աշխատում ենք մեր գործունէութիւնը խղճի հետ համերաշխ տանել, իսկ երկրորդը՝ երբ ծածկում ենք մեզանից խղճի ցուցումները մեր կեանքը շարունակելու հնարաւորութիւն ունենալու համար:

Կան մարդիկ, որ առաջինն են անում և կան, որ անում են երկրորդը: Առաջինն հասնելու համար միայն մի միջոց կայ՝ — բարոյական լուսաւորութիւն, մեր ներքին լոյսն առատացնելու ջանքը և արթուն հսկողութիւնն այն բանի, ինչը որ նա լուսաւորում է: Երկրորդին հասնելու՝ — մեր խղճի ցուցմունքները մեզանից ծածկելու համար երկու միջոց կայ — արտաքին և ներքին, արտաքին միջոցն է՝ զբաղւել այնպիսի բաներով, որոնք հեռացնում են մեր ուշադրութիւնը խղճի ցուցմունքներից. ներքինը կախնում է հէնց խիղճը խաւարեցնելու մէջ:

Ինչպէս որ մարդս կարող է ծածկել իւր տեսողութիւնից իրեն առաջ գտնւած առարկան երկու ձևով՝ դարձնելով իւր հայեացքը աւելի ազդու առարկաների վրայ և աղտոտելով աչքերը, ճիշտ նոյն ձևով և խղճի ցուցումները կարող է ծածկել իրենից երկու ձևով. — արտաքին՝ զբաղեցնե-

լով իւր ուշադրութիւնը ամեն տեսակ պարտամունքներով, հոգսերով, գլարճութիւններով և խաղերով. և ներքին՝ — բթացնելով՝ աղտոտելով ուշադրութեան գործարանը: Բութ և սահմանափակ բարոյական հասկացողութիւն ունեցող մարդկանց համար յաճախ միանգամայն բաւական է ուշադրութեան արտաքին զբաղումը, որպէս զի չը նկատեն խղճի ցուցումներն իրենց կեանքի անկանոնութեան մասին, բայց բարոյապէս զգալուն մարդկանց համար այդ միջոցները յաճախ բաւական չեն:

Արտաքին միջոցները միանգամայն չեն հեռացնում ուշադրութիւնը կեանքի և խղճի պահանջների մէջ եղած հակասութեան գիտակցութիւնից. այդ գիտակցութիւնը խանգարում է տպրել և մարդիկ տպրել կարողանալու համար ձեռնարկում են խիղճը բթացնելու ներքին, բայց աներկբայ միջոցի, որը կախնում է անմտացնող միջոցներով ուղեղը թունաւորելու մէջ:

Կեանքը այնպէս չէ, ինչպէս աշտաբէ լինէր խղճի պահանջների համաձայն: Կեանքն այդ պահանջների համաձայն ուղղելու համար ուժ չըկայ: Այդ հակասութիւնները գիտակցելուց մեզ հեռացնող գլարճութիւնները կամ բաւական չեն և կամ զգեցրել են արդէն և ահա տպրել շարունակելու հնարաւորութիւն ունենալու համար, չը նա-

յաճ կեանքի անկանոնութեան մասին խղճի ցուցմունքներին, մարդիկ թուեաւորում են այն գործարանը, ժամանակաւորապէս ընդհատելով նրա գործունէութիւնը, որի միջոցաւ արտալայաւում են խղճի ցուցումները՝ ճիշտ այնպէս, ինչպէս որ կանխագէտ կերպով աչքերը ազդոտող անձը կը ծածկէր իւր տեսողութիւնից տեսնել չը ցանկացած իրը:

II

ձաշակի, բաւականութեան, զւարճութեան և ուրախութեան մէջ չէ յաշիշի, ափիօնի, գինու և ծխախոտի տարածման գաղտնիքը. ոչ, այլ միայն խղճի ցուցումները մեզանից ծածկելու պահանջի մէջ:

Գնում եմ ես մի անգամ փողոցով և անցնելով խօսակցող կառապանների մօտից՝ լսում եմ, որ մինն ասում է միւսին. «յալանի բան է, որ ժաժկալ - չէ՛ հարբած մարդը կամաչի»:

Ժաժկալն ամաչում է այն բանից, ինչ որ ամօթ չէ հարբեցողի համար: Այս բառերով արտալայաւած է այն գլխաւոր և հիմնական պատճառը, որի համար մարդիկ դիմում են հարբեցնող միջոցների: Մարդիկ դիմում են այդ միջոցներին կամ համաչելու իրենց այն վարմունքից, որը գործել են խղճի հակառակ, կամ նրա համար,

որ իրենց հասցենն այն գլուխեան, երբ կարելի է անել խղճին հակառակ մի այնպիսի գործ, դէպի որը մարդուս մղումէ նրա կենդանական բնութիւնը:

Ժաժկալ մարդը կամաչի դնալ անառակ կանանց մօտ, կամաչի գողանալ, կամաչի սպանել. հարբածը այդպիսի բաներից չի ամաչիլ և այդ պատճառով խղճից արգելած մի գործ կատարելու համար՝ մարդս հարբում է՝ անմտանում:

Յիշում եմ իմ բարեկամուհի՝ պառաւ իշխանուհուն սպանելու համար դատուող խոհարարի ցուցումն, որը զարմացրեց ինձ: Նա պատմեց, որ երբ իւր սիրուհի աղախնուն ուղարկեց և հասաւ գործելու ժամը, դանակը ձեռին դիմեց դէպի նշնջարանը, բայց զգաց, որ չը հարբած (ժաժկալ) չի կարող ի կատար ածել իւր մտադրութիւնը: . . «Ժաժկալ մարդն ամաչում է»: Նա վերադարձաւ, խմեց առաջուց պահած օղու երկու բաժակը և ապա միայն պատրաստ զգաց իրեն և կատարեց իւր մտադրութիւնը:

Ոճիրներից տասից իննը այսպէս է գործւում. «համարձակութեան համար պէտքէ կունձել»:

Կանանց անկման կէս մասը տառք է գալիս գինուց: Անառականոցների բոլոր այցելութիւնները կատարւում են հարբած վիճակում: Մարդիկ գիտեն գինու այս՝ խիղճը թմրեցնելու յատկութիւնը:

նը և գիտակցաբար գործ են ածում այն՝ լատկապէս այդ նպատակաւ:

Բաւական չէ, որ մարդիկ իրենց խղճի ձայնը թմբեցնելու համար հարբում են՝ քաջ գիտենալով գինու ազդեցութիւնը, նոքա ուրիշներին հարկադրելու համար, որ իրենց խղճի հակառակ գործանեն, գիտմամբ հարբեցնում են նրանց, կազմակերպում են մարդկանց հարբեցնելու (թըմբեցնելու) գործը նրանց խղճից զրկելու նպատակաւ: Պատերազմներում երբ հարկաւորէ լինում բռնամարտութիւն՝ զինւորներին միշտ հարբեցնում են: Սևաստօպօլի կռիւներում Ֆրանսիացի բոլոր զինւորներն հարբեցրած էին լինում:

Բոլորին յալտնի են բազմաթիւ անձինք, որոնք սոսկալի հարբեցող են դարձել կատարած այն ոճիրների պատճառով, որոնց համար տանջել է նրանց խիղճը: Ամեն ոք կարողէ նկատել, որ անբարոյական կեանք վարող մարդիկ աւելի են տրամադիր հարբեցնող նիւթեր գործածելու: Աւագակային խմբերն ու անառակ կանաչ չեն կարողանում առանց գինու ապրել:

Ամենքը գիտեն և ընդունում են, որ հարբեցուցիչ նիւթերի գործածութիւնը խղճի խալթի հետեւանքն է, որ որոշ անբարոյական պարապմունքների ժամանակ հարբեցնող նիւթերը գործ են ածում խղճի ձայնը խլացնելու համար: Ամենքը գի-

տեն և ընդունում են, որ հարբեցնող նիւթերի գործածութիւնը խլացնում է խիղճը, որ հարբած մարդն ընդունակ է այնպիսի գործեր կատարելու, որոնց մասին նա ժողովրդական ժամանակ չէր համարձակել մտածել անգամ: Բոլորն էլ համաձայն են այս կէտում, բայց զարմանալի բան. — երբ հարբեցնող նիւթերի գործածութեան չեն լաջորդում այնպիսի ոճիրներ, ինչպէս գողութիւն, սպանութիւն, բռնաբարութիւն և այլն, երբ հարբեցնող նիւթերը գործ են ածւում ո՛չ թէ որևէ սոսկալի ոճիրներից լետոյ, այլ այնպիսի որոշ պարապմունք ունեցող մարդկանցից, որոնք յանցաւոր չեն համարւում մեր կողմից, և երբ այդ նիւթերն ընդունւում են ո՛չ թէ մի անգամից՝ մեծ քանակութեամբ, այլ չափաւոր կերպով, այդ դէպքում, չը գիտեմ թէ ինչու, ենթադրւում է, որ հարբեցնող միջոցներն այլևս չեն ներգործում և չեն խլացնում խղճի ձայնը:

Այսպիսով ենթադրւում է, որ միջոցի տէր ուսումնարան ճաշից առաջ խմած մի գլիս օղին ու ճաշից լետոյ խմած մի բաժակ գինին, ֆրանսիացու արևելքը, անգլիացու սօրտերն ¹ ու սօրալէյնը, ² Գերմանացու գարեջուրը, իսկ հարուստ չինացու կողմից չափաւոր քանակութեամբ ափիօնն ու ծըխախոտ ծխելը կատարւում են միմիայն գուարճու-

¹ Գարեջրի անսակը. ² գինին:

թեան համար և բոլորովին չեն ազդում մարդկանց խղճի վերայ:

Ենթադրու՞մ է, որ եթէ այդ սովորական թմրեցումից լանցանք, գողութիւն և սպանութիւն չի կատարւել այլ տեղի են ունեցել միայն լիմար և վատ գէպքեր, ապա ուրեմն նրանք պատահել են ինքնըստ ինքեան և առնչութիւն չեն ունեցել հարբեցութեան հետ: Ենթադրու՞մ է, որ եթէ այդ մարդիկ քրէական լանցանք չեն գործել, ապա ուրեմն և առիթ չունին իրենց խիղճը խլացնելու, և այն կեանքը, որ վարում են մշտապէս իրենց թրմրեցնող մարդիկ, միանգամայն լաւ է և նոյնը կը մնար, եթէ մարդիկ չը հարբէին: Ենթադրու՞մ է, որ հարբեցուցիչ միջոցների մշտական գործածութիւնը բոլորովին չի մթնեցնում նրանց խիղճը:

Չնայելով, որ իւրաքանչիւրը փորձով գիտէ, որ գինու և ծխախոտի գործածութիւնից տրամադրութիւնը փոխւում է և ամօթալի չի համարւում այն, ինչ որ ամօթալի կը լինէր առանց զրգոման. որ իւրաքանչիւր՝ խղճի թէկուզ աննշան խալթից լետու ակամայից մարդս ձգտում է սրել է հարբեցուցիչ նիւթի և որ այդ նիւթերի ազդեցութեան տակ դժւար է կշռել մեր կեանքն ու գրութիւնը, որ հարբեցնող նիւթերի հաւասարաչափ և մշտական գործածութիւնը նոյն ֆիզիոլոգիական ներգործութիւն ունի, ինչ որ ունենում է միանգամից

և անչափ ընդունածը, չափաւոր խմող և ծխող մարդկանց այնպէս է թւում, որ թմրեցնող միջոցները նրանք բոլորովին խիղճը թմրեցնելու համար չեն գործածում, այլ բաւականութեան և ճաշակի համար:

Բայց բաւական է՝ առանց մեզ սլաշտալանել ցանկանալու՝ լուրջ և անխղճնակալ կերպով մտածել այդ մասին և կը համոզւինք, որ — նախ՝ եթէ անմտացնող նիւթերը միանգամից՝ մեծ քանակութեամբ գործածած ժամանակ խլացնում են մարդու խիղճը, ապա ուրեմն նոյն նիւթերի մշտական գործածութիւնը միևնոյն ներգործութիւն պէտք է ունենայ, որովհետեւ հարբեցնող նիւթերը՝ ինչ չափով էլ գործածելու լինինք՝ ի բնէ միատեսակ են ներգործում, — միշտ զրգոելով և ապա բթացնելով ուղեղի գործունէութիւնը: Երկրորդ. եթէ հարբեցնող նիւթերն իրենց լատկութեամբ կարողանում են խլացնել մարդու խիղճը, ապա ուրեմն նրանք նոյն լատկութիւնն ունին միշտ՝ և այն ժամանակ, երբ նրանց ազդեցութեան շնորհիւ կատարւում է սպանութիւն, գողութիւն, բռնութիւն, և երբ նրանց ազդեցութեամբ ասւում է մի բառ, որը չէր ասել. մտածում և զգում են այն; ինչ որ չէին մտա, ծիլ և զգալ առանց նրանց. և երրորդ. եթէ հարբեցնող նիւթերի գործածութիւնը հարկաւոր է

խլացնելու համար զողերի, աւագակների և անառակ կանանց խիղճը, նրաք նոյն ձևով հարկաւոր են և այնպիսի պարապմունք ունեցող մարդկանց, որոնց դէմ է նրանց խիղճը, թէկուզ նրանց այդ պարապմունքը շրջապատողներից օրինական և պատուաւոր համարւի:

Մի խօսքով՝ չի կարելի չը հասկանալ, որ հարբեցուցիչ նիւթերի գործածութիւնը՝ — լինի այն պարբերական, թէ մըշտական, մեծ կամ փոքր չափով, բարձր կամ ստորին շրջանում, առաջ է գալիս միևնույն պատճառով՝ — խլացնելու խիղճի ձայնը, որպէս զի չընկառւի մարդու գիտակցութեան պահանջների և նրա կենցաղավարութեան հակասութիւնը:

III

Ահա սրանումն է հարբեցուցիչ նիւթերի, ի միջի ալլոց և ծխախոտի տարածման պատճառը, որը համարեա թէ ամենապնասակարն է և ամենատարածւած:

Ենթադրուած է, որ ծխախոտը քէֆ է տալիս, պարզում է միտքը, զբաւում է գէպի իրան ինչպէս և ամէն տեսակ սովորութիւն միայն, երբէք չունենալով խիղճ խլացնելու այն ներգործութիւ-

նը, որպիսին ունի գինին: Բայց արժէ փոքր ինչ աւելի ուշադրութեամբ դիտել այն պայմաններն, որոնց ժամանակ ծխելու կարիք է զգացւում, որպէս զի համոզւինք, որ ծխախոտով հարբելը նոյն ձևով է ներգործում խիղճի վերայ, ինչպէս և գինին, և մարդիկ գիտակցաբար դիմում են այդ տեսակ հարբելուն՝ մանաւանդ այն ժամանակ, երբ այդ հարկաւոր է լինեալ նպատակով: Եթէ ծխախոտը պարզելու լինէր մարդու միտքը և ուրախացնէր նրան, այդպիսի սաստիկ պահանջ չէր զգացւիլ, պահանջ՝ յայտնի և որոշ գէպերում և մարդիկ չէին ասիլ, որ նրանք աւելի շուտ պատրաստ են մնալ առանց հացի, քան առանց ծխախոտի. և իրօք ծխելը յաճախ կերակրից գերադաս չէին համարիլ:

Այն խոհարարը, որը մորթել էր իւր տիրուհուն, պատմում էր, որ երբ ինքը ննջարան մըտաւ, դանակով կտրեց նրա կոկորդը և նա խլուռալով վայր ընկաւ ու արիւնը ցալտեց աղբիւրի նման՝ սարսեց. «Նո չը կարողացայ վերջացնել գործս», — ասում էր նա, — «և դուրս եկայ ննջարանից ընդունարան, նստեցի այնտեղ և ծխեցի մի գլանակ»: Միայն ծխախոտով հարբելուց չետոյ նա իրան կարող է զգացել կրկին վերադառնալուն ննջարան, վերջնականապէս մորթելու պառաւին և ընտրելու նրա իրերը:

Ակներև է, որ ծխելու կարիքն այդ բոլորին նրա մէջ առաջ էր եկել ոչ թէ քէֆի գալու, կամ միտքը պարզելու, այլ իսկապէս խլացնելու համար մի ինչ որ բան, որը նրան խանգարում էր աւարտել մտածած գործը:

Ծխախոտով հարելու այգայիսի որոշ կարիքը կարող է նկատել իւր մէջ ծխողներից իւրաքանչիւրը լաչանի՝ ամենադժուար բոլորներին: Յիշում եմ ծխելու ժամանակներից, թէ երբ աւելի մեծ կարիք էի զգում ծխախոտի: Այդ միշտ լինում էր այնպիսի բոլորներին, երբ աշխատում էի չը լիշել այն, ինչ որ լիշում էի, ինչ որ ուզում էի մոռանալ, չը մտածել: Նստած եմ միայն, ոչինչ չեմ անում, գիտեմ որ ես պէտք է սկսեմ աշխատանքս, բայց չեմ ուզում. ես ծխում եմ և շարունակում նստել նույն ձևով: Ես մէկին խօստացել եմ լինել նրա մօտ հինգ ժամին, բայց նստել մնացել եմ մի ուրիշ տեղ. ես լիշում եմ, որ ուշացել եմ, բայց չեմ ուզում այլևս լիշել այդ, և ես ծխում եմ: Ես գալրացած եմ և տուում եմ մարդուն փրաւորական բաներ. գիտեմ, որ վատ եմ անում. տեսնում եմ, որ պէտք է դադարել, բայց ես ցանկանում եմ ընթացք տալ բարեկամներին. — ես ծխում եմ և շարունակում գրգռել: Ես թուղթ եմ խողում և աւելի շատ եմ տարւում, քան ինչով որ ուզում էի չափաւորել խաղս և ես ծխում

եմ: Ես ինչ վատ գրութեան մէջն եմ գցել, վատ եմ վարել, սխալել, պէտք է որ հասկանամ դրութիւնս՝ նրանից դուրս գալու համար, բայց չեմ ուզում խօստովանել, — ես մեղադրում եմ ուրիշներին և ծխում: Ես գրում եմ և այնքան էլ դո՛հ չեմ գրածովս. պէտք է ձգել այն, ցանկութիւն չը կալ վերջացնելու մտադրածս, և ես ծխում եմ: Ախճում եմ և տեսնում, որ ես ու հակառակորդս չենք հասկանում և ցանկութիւն էլ չունինք իրար հասկանալու, ուզում եմ արդարացնել մտքերս. — ես շարունակում եմ խօսել և ծրխել:

Ծխախոտի առանձնատկութիւնը միւս հարեցուցիչ միջոցներից, բացի հեշտ հարբելուց՝ — կաշանում է նրանում, որ նա դիւրութեամբ գործ է գրւում ամենամանր գէպերի ժամանակ: Չը խօսելով այն մասին, որ ավիօնի, գինու և լաշիշի գործածութիւնը պահանջում է որոշ լարմարութիւններ, որպիսիք միշտ անհնարին է դանել, իսկ ծխախոտն ու թուղթը միշտ կարելի է հետն ունենալ և որ՝ մինչ ավիօն գործածողն ու գիներբուն — արկօհօլիկը սարսափ են ազգում, ծրխողը ո՛չ մի զգաւնք չի առաջ բերում, ծխախոտի գերազանցութիւնը միւս բոլոր հարեցուցիչ նիւթերից կաշանում է նրանում, որ ավիօնի, լաշիշի և օղու թոյնը տարածւում է մեր բոլոր գոր-

ծերի և տալուսրութիւնների վերայ որոշ և այն էլ բուսական երկար ժամանակ, մինչդեռ ծխախոտի հարբեցութիւնը (թոյնը) կարող է ուղղւած լինել իւրաքանչիւր գործի դէմ: Յանկանում ես անել այն, ինչ որ պէտք չէ, ծխում ես մի գըլանակ ու անմտանում՝ հարբում այնչափ, որչափ որ հարկաւոր է անելու այն, ինչ որ պէտք չէր և դարձեալ թարմ ու արթուն ես, կարող ես պարզ մտածել ու խօսել. կամ զգում ես, որ արել եմ մի այնպիսի բան, որ պէտք չէր անել, — կրկին ծխախոտ, և վատ կամ ամօթալի վարմունքի տըհած գիտակցութիւնը ոչնչանում է և կարող ես զբաղւել այլ գործով ու մոռանալ:

Չը խօսելով այն մասնաւոր դէպքերի մասին, երբ իւրաքանչիւր ծխող սկսում է ծխել ո՛չ թէ իւր սովորական պահանջին բաւարարութիւն տալու և ժամանակ անցկացնելու համար, այլ որպէս մի միջոցի՝ խլացնելու իւր խղճի ձայնը այնպիսի ձեռնարկութեանց դէմ, որոնք կատարւելու են կամ կատարւել են, արդեօք տկներև չէ այն խիստ կապն ու կախումն, որը գոյութիւն ունի ծխել սիրողների և նրանց կենցաղավարութեան մէջ:

Երբ են սկսում ծխել պատանիները. համարեա միշտ ա՛յն ժամանակ, երբ նրանք կորցնում են մանկական անմեղութիւնը: Բայց ծխողները կարողանում են թողնել ծխելը հենց որ կեանքի աւե-

լի բարոյական պայմաններումն են գտնւում և նորից սկսում են ծխել, հէնց որ ընկնում են ապականւած շրջանը: Ինչո՞ւ խաղամուկները բոլորն էլ ծխում են: Ինչո՞ւ կանանցից ամենաքիչ ծխողներ հանդիպում են օրինաւոր կեանք վարողների մէջ: Ինչո՞ւ խելագարներն ու անբարոյական կանայք ծխում են անխտիր: Սովորութիւնն իւր կարգին, բայց ակներև է, որ ծխելը շատ որոշ կախումն ունի խղճի ձայնը թմրեցնելու կարիքի հետ և որ մարդիկ այսպիսով հասնում են նպատակին:

Թէ ի՞նչ չափով ծխելը խլացնում է մարդուս խղճի ձայնը, կարելի է դիտել իւրաքանչիւր ծխողի վերայ: Ամեն մի ծխող, անձնատուր լինելով կրքի, մոռանում կամ զանց է առնում հասարակական կենցաղի այն ամենաառաջին պահանջները, որպիսիք նա անում է ուրիշներից և պահպանում անձամբ, քանի դեռ նրա խղճի ձայնը ծխախոտով խլացրած չէ: Մեր միջին կրթութեան տէր իւրաքանչիւր մարդը անթույլատրելի, անքաղաքավարի և անմարդասէր է գտնում խանգարել այլոց հանգըստութիւնն ու խաղաղութիւնը, մանաւանդ այլոց առողջութիւնը՝ իւր հաճոյքի համար: Ոչ ոք իրեն թոյլ չի տալ թրջել այն սենեակը, որի մէջ մարդիկ են նստած. աղմուկ հանել, գոռալ, ցուրտ, տաք և կամ ապականւած օդ թողնել այնտեղ. թոյլ տալ այնպիսի վարմունք, որը խանգարում

ու վնասում է այլոց: Բայց հազար ծխողներից ոչ մէկը չի քաշել վատաւորը ծխով լցնելու այն սենեակը, որի օդից շնչում են չրծխող կանայք և մանուկներ: Եթէ անգամ ծխել ցանկացողները ներկայ եղողներից սովորաբար հարցնում են «ձեզ անհաճոյ չէ», այդ նրա համար, որ գիտեն ընդունաւած պատասխանը. «հաճեցէք խնդրեմ».

(չը նայած, որ չրծխողին հաճելի չի կարող լինել՝ շնչել վարակած օդը և գտնել ծխախոտի հոտած մնացորդներ ափսէների, աշտանակների, մոխրամանների վրայ և բաժակների ու ֆինջանների մէջ): Եթէ անգամ չրծխող հասակաւորները կարողանան տանել ծխախոտի ծուխը, մանուկներին, որոնցից ոչ ոք չի հարցնում, — երբէք այդ հաճելի և օգտակար լինել չի կարող: Սակայն միւս բոլոր դէպքերում ազնիւ և մարդասէր մարդիկ ծխում են հրեխանների ներկայութեամբ՝ ճաշի ժամանակ, փոքրիկ սենեակներում՝ վարակելով օդը ծխախոտի ծխով և չզգալով այդ վիճոցին խղճի խայթ տատմանը: Սովորաբար տուում են, ինչպէս և տուում էի ես, որ ծխելը նպաստում է մտաւոր աշխատանքին, և եթէ նախելու լինինք մտաւոր աշխատութեան քանակին, կասկած չըկայ, որ այդ այդպէս է: Ծխող մարդը, որը հէնց ծրխելու պատճառաւ դադարում է իւր մտքերը կշռելուց ու գնահատելուց, այնպէս է կարծում,

որ «լանկարծ նրա մտքերը շատացել են»: Բայց այդ երբէք չի նշանակում, որ նրա մտքերը շատացել են, այլ միայն այն, որ նա կորցրել է իւր մտքերը (կօնորօլի) խիստ վերաքննութեան ենթարկելու ընդունակութիւնը:

Երբ որ մարդս աշխատում է, նա իւր մէջ նկատում է միշտ երկու գոյութիւն՝ — մինն աշխատող, իսկ միւսը՝ — աշխատանքը գնահատող: Որքան խիստ է գնահատութիւնը, այնքան դանդաղ ու լաւ է գործը և ընդհակառակն: Իսկ եթէ գնահատողը հարբեցուցիչ նիւթի ազդեցութեան տակ լինի, գործը ըստ քանակի կըլինի շատ, իսկ ըստ որակի՝ ստոր:

«Եթէ ես չեմ ծխում, գրել չեմ կարող. գրելս չի գալիս. ես սկսում եմ և չեմ կարողանում շարունակել». ասում են՝ և ասում էի սովորաբար: Նշանակում է այն, որ ինչ էլ այժմս ուղում ես գրել արդէն, գեռ չի հասունացել գիտակցութեանդ մէջ, այլ միայն աղօտ կերպով ներկայանում է քեզ, և քո մէջ ապրող ու գնահատող քննադատը, որը հարբած չէ ծխախոտով, այդ է ասում քեզ: Եթէ դու չըծխէիր՝ կըթողնէիր սկսածդ գործը և կըսպասէիր այն ժամանակին, երբ ինչի մասին որ մտածում ես, կըպարզւէր քեզ համար: Դու կաշխատէիր խորին կերպով թափանցել այն բանում, ինչ որ աղօտ ներկայա-

նում է քեզ. ի նկատի կառնելի առաջ եկած ընդդիմախօսութիւնները և կըլարէի բո ամբողջ ուշադրութիւնդ, որպէս զի մտքերդ պարզ լինէին: Բայց դու ծխում ես, ներքին քննադատդ հարբում է և գործիդ արգելափակները հեռացւում են. ինչ որ չըծխած, արթուն ժամանակ քեզ չնչին էր թւում, կրկին նշանաւոր է երևում. ինչ որ մութ էր, այլևս ալգպէս չի ներկայանում. բնդդիմախօսութիւններն անյայտանում են և դու շարունակում ես գրել, և գրում ես արագ ու շատ:

IV

«Բայց միթէ այդպիսի փոքր ու չնչին փոփոխութիւնները, որպիսիք տեղի են ունենում ծխախոտի և գինու չափաւոր գործածութիւնից, կարող են առաջ բերել որեւէ նշանաւոր հետեանքներ: Հասկանալի է, որ եթէ մարդս շատ ափիօն կամ լաշէշ է ծխում, հարբում է զինքով ալնչափ, որ ընկնում և կորցնում է գիտակցութիւնը, այդ տեսակ հարբեցութեան հետեանքները կարող են շատ նշանաւոր լինել. բայց այն, երբ մարդս գինու կամ ծխախոտի թեթեւ ազդեցութեան տակ է գտնւում, չի կարող որեւէ նշանաւոր հետեանք ունենալ» . — աստէ՛ն են ասում սովորաբար: Մարդկանց թւում է, որ փոքր թունաւորումն, գիտակցութեան փոքր չափով խաւարումն չի կարող նշանաւոր ազդեցու-

թիւն առաջ բերել: Բայց մտածել այսպէս, նշանակում է ընդունել միայն, որ ժամացույցին վնասակար կարող է լինել քարին զարկւիլը, իսկ եթէ մի փոքրիկ բան գցենք նրա մեքենաների մէջ, չի կարող վնասել նրան:

Չէ՛ որ մարդկային կեանքը ղեկավարող գլխաւոր աշխատանքը ոչ թէ ձեռքերի, ոտների և մէջքի շարժողութեան, այլ գիտակցութեան մէջն է: Զեռքով կամ ոտքով մի բան կատարելու համար, նախ հարկաւոր է, որ որոշ փոփոխութիւն առաջ գալ մեր գիտակցութեան մէջ: Ահա այդ փոփոխութիւնն է որոշում մարդու բոլոր լաշորդական գործունէութիւնը: Իսկ այդ փոփոխութիւնները լինում են շատ մանրիկ և համարեա աննկատելի:

Բրիւլլով ուղղեց աշակերտի նկարի ուրուագիծը: Աշակերտը՝ — տեսնելով փոխած ուրուագիծն՝ ասաց. — Այ քեզ բան, հազիւ միայն փոքրինչ ձեռք տւիք նկարիս և բոլորովին ուրիշ բան դարձաւ: Բրիւլլովը պատասխանեց. «Գեղարեստն այնտեղից է սկսւում, որտեղից սկսւում է «փոքրինչը»:

Այս բանաձևը զարմանալի ճիշտ է, ոչ թէ միայն գեղարեստի, այլ ամբողջ կեանքի վերաբերմամբ: Կարելի է ասել, որ ճշմարիտ կեանքը սկսւում է այնտեղ, որտեղից սկսւում է «փոքրինչը», այնտեղ, ուր տեղի ունեն մեզ «փոքրինչ»

երևցող՝ հազիւ նշմարելի փոփոխութիւններ: Նըշմարիտ կեանքը ոչ թէ այնտեղ է կատարւում, ուր տեղի ունին մեծամեծ փոփոխութիւններ, ուր փոխադրւում և ընդհարւում, կռւում և իբար սպանում են մարդիկ, այլ նա կատարւում է այնտեղ, ուր որ տեղի ունին անսահման փոքրիկ փոփոխութիւններ:

Բասկօլնիկովի իսկական կեանքը այն ժամանակ չէր կատարւում, երբ նա սպանում էր պառաւին կամ նրա քրոջը: Սպանելով պառաւին և մանաւանդ քրոջը, նա իսկական կեանքով չէր ապրում, այլ գործում էր որպէս մեքենայ, անում էր այն, ինչ որ չէր կարող չանել. պարպում էր այն փամփուշտը, որը վաղուց դրւած էր նրա մէջ: Պառաւի մէկը սպանւած է, միւսը կանգնած նրա առաջ, իսկ կացինն էլ ձեռքին է:

Բասկօլնիկովի իսկական կեանքը կատարւում էր ոչ թէ այն ժամանակ, երբ նա հանդիպեց պառաւի քրոջը, այլ այն ժամանակ, երբ նա դեռ ոչ մէկին չէր սպանել, երբ դեռ ուրիշի բնակարան չէր մտել սպանութիւն կատարելու մտքով, երբ ձեռքին կացին և վերարկուի վերայ չուներ այն հանգուցը, որից կախում էր կացինը: Այլ այդ կեանքը կատարւում էր այն ժամանակ, երբ նա պառաւի մասին չէր էլ մտածում. այլ պառկած գահաւորակի վերայ իւր բնակարանում, մտածում

էր ոչ թէ պառաւի մասին, կամ թէ արդեօք կարելի է մի մարդու կամքով ջնջել աշխարհի երեսից միւս աւելորդ և վնասակար մարդուն, այլ մտածում էր. --- արդեօք պէտք է, որ ինքն ապրի Պետերբուրգում, պէտք է արդեօք մօրից փող վերցնել թէ ոչ և միւս՝ պառաւի հետ ոչ մի առնչութիւն չունեցող խնդիրների մասին: Եւ ահա հէնց այդ ժամանակ, կենդանական գործունէութիւնից միանգամայն անկախ շրջանում, վճռւում էին այն խնդիրները, կըստանի նա արդեօք պառաւին, թէ ոչ: Այս հարցերը վճռւում էին ոչ թէ այն ժամանակ, երբ նա, սպանելով պառաւներին մէկին, կացինը ձեռին կանգնած էր միւսի առաջ, այլ այն ժամանակ, երբ նա ոչ թէ գործում, այլ մտածում էր միայն. երբ գործում էր միայն նրա գիտակցութիւնը և այդ գիտակցութեան մէջ կատարւում էին հազիւ նշմարելի՝ փոքրիկ փոփոխութիւններ: Եւ ահա հէնց այդ ժամանակն է աւելի նշանաւոր և կարևոր լինում մտքի պարզութիւնը՝ արծարծւած խնդիրը վճռելու համար: Ահա հէնց այդ ժամանակ մի բաժակ զարեջուր և ծխած մի հատիկ պապիրոսը կարող են արգելք լինել խնդրի վճռին, կարող են հեռացնել այդ վճիռը, խլացնել խղճի ձայնը, նպաստել խնդրի լուծման յօգուտ ստոր՝ կենդանական բնութեան, ինչպէս այդ տեղի ունեցաւ Բասկօլնիկովի հետ:

Հագիւ նշմարելի փոփոխութիւններ, մինչդեռ հէնց նրանցից են առաջ գալիս ամենավիթխարի, սոսկալի հետեւանքներ: Նրանցից, ինչ որ տեղի կունենալ, երբ մարդս վճռեց ու սկսեց գործել, կարող են փոխել նիւթական շատ ու շատ բաներ, կարող են կործանուել տներ, հարստութիւններ, մարդկանց մարմիններ և այլն, բայց մարդուս գիտակցութեան մէջ բուն գրածից աւելին՝ երբէք չի կարող լինել: Պատահելիքի սահմանները միշտ գրեալ են գիտակցութիւնից:

Բայց գիտակցութեան շրջանում տեղի ունեցող հագիւ նշմարելի փոփոխութիւններէից կարող են առաջ գալ իրենց նշանակութեամբ աներևակայելի հետեւանքներ, որոնց համար սահմաններ չըկան:

Թող չըկարծեն, որ ասածներս որևէ առընչութիւն ունին կամքի ազատութեան կամ զէտերմիւնդմի վերաբերեալ խնդիրների հետ: Այս առարկաների մասին խօսակցութիւնները միանգամայն աւելորդ են նպատակիս և առհասարակ որ և է խնդրի համար: Չը վճռելով այն խնդիրը, թէ արդեօք մարդս կարող է վարել այնպէս, ինչպէս ինքն է կամենում (խնդիր, որն ըստ իս սխալ է գրեալ), ես առում եմ միայն այն, որ մարդկային գործունէութիւնը որովհետև որոշուած է նրա գիտակցութեան մէջ կատարուած չնչին փոփոխու-

թիւններով (միւսնոյն է ընդունում ենք արդեօք, թէ չենք ընդունում կամքի ազատութիւն կոչւած բանը), ապա ուրեմն պէտք է առանձնապէս ուշադիր լինել այն դրութեան, երբ արտալուծում են այդ չնչին փոփոխութիւնները, ճիշտ այնպէս՝ ինչպէս որ հարկաւոր է ուշադիր լինել դէպի այն կշեռքի դրութիւնը, որով մենք իրեր ենք կշռում: Որքան այդ կախած է մեզանից, պէտքէ աշխատել՝ դնել մեզ և ուրիշներին այնպիսի պայմաններում, որ չըխանգարին մտքի նրբութիւնն ու պարզութիւնը, որոնք հարկաւոր են գիտակցութեան կանոնաւոր գործունէութեան համար և ոչ թէ հակառակ վարելի, ջանալով դժարացնել և շփոթել գիտակցութեան այդ աշխատանքը հարեցուցիչ նիւթեր գործածելով:

Ձէ որ մարդս հոգեւոր և կենդանական էակ է: Մարդուն կարելի է ղեկավարել՝ ազդելով նրա հոգու վրայ և կարելի է ղեկավարել ազդելով նրա մարմնի՝ կենդանականի վերայ: Ճիշտ նոյն ձևով, ինչպէս որ ժամացույցը կարելի է շարժել սլաքով և գլխաւոր անուով: Ինչպէս որ ժամացույցի մէջ աւելի լարմար է գործել ներքին կազմութեամբ (մեխանիզմով), այնպէս էլ մարդուս — մեզ էամ ալլոց — աւելի լարմար է ազդել գիտակցութեան միջոցով: Ինչպէս որ ժամացույցի մէջ պէտք է հսկել մեխանիզմի վերայ, որով աւելի դիւրին է

շարժել այն, այնպէս էլ մարդու մէջ պէտք է պահպանել գիտակցութեան մաքրութիւնն ու պարզութիւնը, որովհետեւ նրանով ամենադիւրին գործն է մարդուս ղեկավարելը. սրանում կասկած չի կարող լինել և բոլոր մարդիկ էլ գիտեն այս: Բայց ստեղծուած է մեզ խաբելու պահանջ. մարդիկ շատ էլ չեն ուզում, որ նրանց գիտակցութիւնը կանոնաւոր գործէ, այլ ցանկանում են, որ օրինաւոր լժի այն, ինչ որ իրենք են անում և գիտակցաբար գործ են ածում այնպիսի նիւթեր, որոնք խանգարում են գիտակցութեան կանոնաւոր աշխատանքը:

V

Խմում և ծխում են ոչ թէ այնպէս՝ — տխրութիւնից, ոչ թէ քէֆի համար, ոչ թէ այն պատճառով, որ հաճելի է, այլ նրա համար, որ խլացնեն իրենց մէջ խիղճը: Եւ եթէ այդպէս է, ուրեմն որքան սոսկալի պիտի լինին նրա հետեւանքները: Իրաւ, երեւակայեցէք, ինչի՞ նման կըլինէր մի շինութիւն, որը մարդիկ շինէին ոչ թէ ընդունաւոր կանոնով, որով պահանջուած է կառուցանել պատերն ուղղահայեաց, ուղիղ գծով, չափելով ուղղագիծ մարմնով և անկիւնները՝ ուղղանկիւն անկիւնաչափով, այլ պատերի ուղղութիւնը որոշելու համար գործածէին ճկուն մար-

մին, որ ընդունակ լինէր ամեն ուղղութիւն ընդունելու պատերի անհարթութեան վերայ, իսկ անկիւններն էլ չափէին մի այնպիսի անկիւնաչափով, որը ամեն տեսակ սուր ու բութ անկիւններին հաւասարէր ու յարմարէր:

Բայց չէ՞ որ մեզ հարբեցնելու շնորհիւ նոյն բանն է կատարուած կեանքի մէջ: Ոչ թէ կեանքն է կատարուած խղճի համաձայն, այլ խիղճն է ճշկուած կեանքի համաձայն:

Այդ տեղի ունի անհատների կեանքում. այդ նոյնը տեղի ունի և ամբողջ մարդկութեան կեանքում, որը կազմւած է առանձին անձերի կեանքերից:

Որպէսզի հասկանալ կարողանանք մեր գիտակցութիւնն այդպէս բխացնելու ամբողջ նշանակութիւնը, թող իւրաքանչիւր մարդ լաւ չիղի իւր հոգեկան կացութիւնն իրեն կեանքի իւրաքանչիւր շրջանում: Ամէն մարդ կըգտնի, որ կեանքի իւրաքանչիւր շրջանում նրա առաջ կանգնած էին բարոյական որոշ խնդիրներ, որոնց վերաբերմամբ նա պէտք է վճիռ տար, որոնցից և կախւած էր նրա կեանքի ամբողջ երջանկութիւնը: Այդ խնդիրները վճռելու համար հարկաւոր է լարել ուշադրութիւնն աւելի մեծ չափով: Ուշադրութիւն լարելը կազմում է աշխատանք: Իւրաքանչիւր աշխատանքի ժամանակ, մամաւանդ նրա սկզբին՝ կալ

մի շրջան, երբ աշխատանքը թուում է ծանր, տանջող և մարդկային թուլութիւնը թելադրում է ցանկութիւն՝ թողնել այդ աշխատանքը:

Սկզբում ֆիզիքական աշխատանքը միշտ չարչարանք է թուում. բայց աւելի մեծ չարչարանք է թուում մտաւոր աշխատանքը: Ինչպէս Լէսսինգն է ասում, մարդիկ մի յատկութիւն ունին՝ — «դադարում են մտածելուց, հէնց որ մտածելը դժուարութիւններ է ներկայացնում», հէնց այն ժամանակ, կաւեյացնեմ ես, «երբ մտածելը սկսում է արդիւնաւէտ դառնալ»: Մարդս զգում է, որ իւր առաջ դրւած խնդիրների լուծումն պահանջում է լարւած, յաճախ ծանր աշխատանք և ցանկութիւն է առաջ գալիս այդ բանից խոյս տալու (ծլկելու): Եթէ նա չունենար իրեն հարբեցնելու ներքին միջոցներ, նա չէր կարողանալ արտաքսել իւր գիտակցութիւնից իրեն առաջ դրւած խնդիրներն և կամայ ակամայ հարկադրւած կըլինէր վճռելու այն: Եւ ահա մարդս գտնում է նրանց վանելու միջոցը, և հէնց որ նրանք նորից գլուխ են բարձրացնում, իսկոյն դիմում է գիտցած միջոցին և գործ է դնում այն: Հէնց որ վճռելու հերթական խնդիրները սկսում են տանջել նրան, մարդս իսկոյն դիմում է այդ միջոցներին և գլուխ է պրծացնում շփոթող խնդիրների առաջ բերած անհանգստութիւնից: Գիտակցութիւնը դադարում է նրանց լուծումը

պահանջելուց և չըլուծւած խնդիրները մնում են առկախ մինչև հետևեալ սթափումն: Բայց հետևեալ սթափման ժամանակ կրկնում է նոյնը և մարդս ամիսներով ու տարիներով, երբեմն ամբողջ կեանքի ընթացքում շարունակում է կանգնած մնալ նոյն բարոյական խնդիրների առաջ՝ ոչ մի քաջ առաջ չըգնալով նրանց լուծելու համար, մինչդեռ բարոյական խնդիրներ լուծելու մէջն է կայանում կեանքի ամբողջ շարժումը:

Կատարւում է միևնոյն երևոյթը, ինչ որ տեղի կունենար, եթէ մարդս պղտոր ջրի միջից աշխատէր, ցանկանար տեսնել ջրի լատակը՝ հանելու այնտեղից թանկագին մարգարիտը, բայց չուզեալով մտնել ջրի մէջ, գիտակցաբար խառնէր և պղտորէր ջուրը՝ — հենց որ նա պարզիլ սկսէր: Հարբեցող մարդը շատ անգամ ամբողջ կեանքի ընթացքում կանգնած է մնում անշարժ, նոյն՝ մի անգամ իւրացրած՝ մութ, հակասող աշխարհահայեցողութեամբ, սթափւելու իւրաքանչիւր դէպքում դէմ ընկնելով այն պատին, որին դէմ էր ընկել 10 - 20 տարի առաջ, և որը ոչնչով չի կարելի ծակել, որովհետև նա գիտակցաբար բթացնում է մտքի այն սուր ծայրը, որով միայն կարող էր ծակել պատը:

Թող ամեն ոք լիջի իրեն այն շրջանում, երբ նա խմում և ծխում էր, և թող նոյնը ստուգի

այլոց վերալ և իւրաքանչիւրը կը նշմարի մի մըշտական գիծ, որով հարբեցող մարդիկ տարբերուում են այդ արատներց ազատ մարդկանցից. որքան աւելի է հարբում մարդս, նա բարոյապէս այնքան աւելի անշարժ է մնում:

Ինչպէս մեզ նկարագրում են, մասնաւոր անհատների համար սոսկալի են յաշիշի և ամփօնի գործածութեան հետեանքները. սոսկալի են մեզ ծանօթ օղու գործածութեան հետեանքները մշտական հարբեցողների համար, բայց անհամեմատ աւելի սոսկալի են ամբողջ հասարակութեան համար այն բանի հետեանքներն, ինչ որ նոքա անվնաս են համարում, այնէ՝ օղու, գինու, գարեջրի, ծրխախոտի չափաւոր գործածութիւնը, որին անշնատուր է լինում մարդկանց մեծամասնութիւնն և մանաւանդ մեր աշխարհի՝ այսպէս կոչւած՝ կրթւած շրջանները: Այդ հետեանքները սոսկալի պիտի լինին, եթէ ընդունենք այն, ինչ որ չի կարելի չընդունել, որ հասարակութեան ղեկավարող գործունէութիւնը՝ քաղաքական, գիտական, վարչական, գրական, գեղարուեստական և այլն, գլխաւորապէս կատարուում է աննօրմալ, հարբած դրութեան մէջ եղած մարդկանց ձեռքով: Սովորաբար ենթադրուում է, թէ այն մարդը, որը, ինչպէս և մեր ունեւոր դասակարգերի մեծամասնութիւնը, գործ է ածում սպիւ-

տային խմիչքներ կերակուր ընդունելու իւրաքանչիւր դէպքում, գտնուում է հետեւալ օրը, իւր աշխատութեան ժամերի միջոցին միանգամայն արթուն դրութեան մէջ. բայց այդ բոլորովին սխալ է: Մի մարդ, որ նախընթաց երեկոյին խմել է մի շիշ գինի, մի բաժակ օղի, կամ երկու թաս գարեջուր, գտնուում է գրգռւելուն յաջորդող թմրութեան ճնշման տակ և այդ պատճառով մտաւորապէս ընկճւած դրութեան մէջ, որն աւելի սաստկանում է ծխելով: Որպէս զի միշտ չափաւոր ծխող և խմող մարդը կարողանալ բնական վիճակի բերել իւր ուղեղը, նա պէտքէ ամենաքիչը, մի շաբաթից աւելի գինի չը խմի ու չը ծխի*.

* Բայց ինչո՞ւ չըծխող և չըխմող մարդիկ մտաւոր և բարոյական աւելի ստոր առտիճանի վրայ են գտնւում, քան ծխող ու խմող մարդիկ: Եւ ինչո՞ւ խմող և ծխող մարդիկ յաճախ արտայայտում են ամենաբարձր մտաւոր և հոգեկան յատկութիւններ:

Սորա պատասխանն այս է, որ մենք չըգիտենք այն բարձր աստիճանը, որին կըհասնէին ծխող և խմող մարդիկ, եթէ նրանք չըծխէին և չըխմէին: Իսկ այն հանգամանքից, որ ստորացողից հարբեցողութեան ենթակայ մարդիկ այնուամենայնիւ արտադրել են մեծ գործեր, մենք կարող ենք եզրակացնել միայն, որ նրանք աւելի մեծ գործեր կըկատարէին, եթէ չըհարբէին: Շատ հաւանական է, որ ինչպէս ասում էր ծանօթներիցս մէկը, Պանտի գործերը գրւած էին լինիլ այն զիտի տարօրինակ

խի ալդ երբէք տեղի չէ ունենում. այնպէս որ, մեր աշխարհում՝ թէ ալոց կառավարող, թէ սովորեցնողներ, թէ կառավարող և թէ սովորող մարդկանց միջոցով տեղի ունեցածների մեծ մասը կատարում է հարբած ժամանակ:

Թող հանաք կամ չափազանցութիւն չըհամարեն այս. մեր կեանքի այլանդակութիւնն ու անմտութիւնը գլխաւորապէս առաջ է գալիս այն մշտական հարբած դրութիւնից, որի մէջ ընկնում է մարդկանց մեծամասնութիւնը: Միթէ կարելի բան է, որ չըհարբած մարդիկ հանգիստ կերպով անէին այն, ինչ որ կատարում է մեր աշխարհում սկսած էյֆեյի աշտարակից՝ մինչև ընդհանուր գինւորագրութիւնը: Սուանց որևէ կարևորութեան կազմում է ընկերութիւն, ժողովում է դրամագլուխ, մարդիկ աշխատում են, լատակագծեր կազմում, միլիոնաւոր աշխատանքի օրեր և միլիոնաւոր և վառ լեզուով, եթէ նա այնքան շատ չըթխէր: Երկրորդ՝ չըպէտրէ մոռանալ և այն, որ մարդս որքան ստոր է կանգնած մտաւորապէս և բարոյապէս, այնքան բիշ է զգում գիտակցութեան և իւր կեանքի անհամբարաշխութիւնն և աւելի բիշ կարիք է զգում հարբելու և հէնց այդ պատճառով էլ տեղի է ունենում այն երևոյթը, որ ամենազգայուն կազմաւորները նրանք են, որոնք հիւանդութեան չափ զգում են կեանքի և խղճի անհամբարաշխութիւնն և անձնատուր լինելով թմրեցուցիչ միջոցների, մեռնում ու կորչում են նրանց շնորհիւ:

Լորփութ երկաթ է ծախսում մի աշտարակ շինելու, և միլիոնաւոր մարդիկ իրենց սլաքաականութիւն են համարում բարձրանալ այդ աշտարակի գլուխը, լինել այնտեղ և իջնել լետ և այդ աշտարակի շինութիւնն ու մարդկանց այցելութիւնը ուրիշ ոչ մի դատողութիւն առաջ չի բերում, բացի ուրիշ տեղերում աւելի բարձր աշտարակներ շինելու ձգտումից:

Արթուն, չըհարբած մարդիկ կարող են այդ անել: Կամ մի ալ բան. Եւրոպական բոլոր ազգերն արդէն տասնեակ տարիներ զբաղւած են մարդկանց կոտորելու ամենալաւ միջոցներ հնարելով և սպանութիւն սովորեցնելով չափահաս բոլոր երիտասարդ մարդկանց: Ամենքն էլ գիտեն, որ բարբարոսների որևէ յարձակումն տեղի ունենալ չի կարող, որ սպանութեանց սլաքապատութիւններն ուղղւած են քրիստոնեայ ժողովուրդների կողմից իրար դէմ: Ամենքն էլ գիտեն, որ դա ծանր, ցաւալի, անյարմար, աւերիչ, անբարոյական, անասուած և անմիտ բան է և ամէնքն էլ պատրաստոււմ են փոխադարձ սպանութեան համար: Մի քանիսը հնարում են քաղաքական զանազան կոմբինացեաներ (համախմբումներ), թէ ով ում հետ պէտք է դաշնակից լինի և որոնց պէտք է կոտորի: Միւսներն իշխում են սպանութեան համար պատրաստուողների վրայ. երրորդ մասն էլ ակամայից՝ խղճի և գիտակցութեան հա-

կառակ՝ ենթարկուում է կոտորածի այդ նախապատ-
րաստութեանց: Միթէ արթուն (ժուժկալ) մար-
դիկ կըկարողանային այսպիսի բան անել: Միայն
հարբած և երբէք չըսթափւող մարդիկ կարող են
անել այդ գործերն և ապրել կեանքի և խղճի այն
սոսկալի հակասութեան մէջ, որում ապրում են
մեր աշխարհի մարդիկ ոչ թէ միայն այս, այլ և
միւս բոլոր դէպքերում:

Ինձ թւում է, որ մարդիկ խղճի պահանջնե-
րի և իրենց կենցաղավարութեան այսպիսի հակա-
սութեանց մէջ երբէք չեն ապրել:

Մեր ժամանակի մարդկութիւնը կարծես թէ
մի ինչ որ բա՛րց կպել՝ բռնւել է: Կարծես թէ
կայ մի ինչ որ արտաքին պատճառ, որն արգելք
է դառնում նրան հասնելու այն դրութեան, որ
լատուկ է նրա գիտակցութեան:

Եւ դարուս՝ եթէ ոչ միակ, գոնէ գլխաւոր պատ-
ճառը հարբեցութեան ֆիզիքական այն դրութիւննէ,
որի մէջ գինով և ծխախոտով դնում է իրան աշ-
խարհի մարդկանց մեծամասնութիւնը:

Այդ մեծ չարիքից ազատուիլը մարդկային կեանքի
դարագլուխ կը լինի և կարծէք այդ դարագլու-
խը սկսում է:

Չարիքը ճանաչուած է:

Հարբեցուցիչ միջոցների գործածութեան վերաբե-
րութեամբ գիտակցութեան մէջ արդէն կատարուել

է փոփոխութիւն:


Մարդիկ հասկացան նրանց վնասը և սկսում են
մատնանիշ լինել նրա վրայ և գիտակցութեան մէջ
տեղի ունեցած աննկատելի փոփոխութիւնը անկաս-
կած առաջ կըբերի մարդկանց ազատուիլն հարբեց-
նող միջոցներից:

Իսկ հարբեցնող նիւթերից ազատուիլը կըբանայ
նրանց աչքերը գիտակցութեան պահանջների վերա-
բերութեամբ և նրանք կըսկսեն անցկացնել իրենց
կեանքը խղճի պահանջների համաձայն:

Եւ կարծես թէ այդ արդէն սկսւում է:

Եւ ինչպէս միշտ՝ սկսւում է բարձր շրջաններից այն
ժամանակ, երբ արդէն վարակուած են բոլոր
ստորինները:





406

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0235054

